12.09.23 - 15.09.23
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ 8-րդ մասնաշենք

Ս.թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ 8-րդ մասնաշենքում կմեկնարկի « Erasmus+ Teaching Staff Mobility Program» ծրագրի շրջանակում կազմակերպվող «How to do Practical Philosophy?» խորագրով դասընթացը:

Դասընթացը վարելու են Լյուվենի կաթոլիկ համալսարանի դասախոս, փ.գ.թ. Ակսել Գոսիերիեսը և ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դասախոս Լևոն Բաբաջանյանը:

Կիրառական փիլիսոփայության հետազոտության մեթոդներին նվիրված դասընթացի շրջանակում քննարկվելու են այնպիսի հարցեր և խնդիրներ, որոնք վերաբերում են բարոյագիտական հիմնավորումներում փաստերի, հասկացությունների, արժեքների և նորմերի հարաբերակցությանը:

Դասընթացին մասնակցելու են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի, մագիստրատուրայի ուսանողները և ասպիրանտները:

Դասընթացն անցկացվելու է ս.թ. սեպտեմբերի 12-15-ը:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am